ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ _____

«01.09» 2022.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Շինուհայրի միջնակարգ դպրոց 4բ-րդ դասարան

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Մկրտչյան Աշխեն Արայիկի

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

« 2022_2023 » ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը) 4-րդ դասարանում 2022-2023 ուստարում սովորում է 19 աշակերտ՝ 8աղջիկ, 11տղա։Աշակերտների սոցիալական վիճակը գնահատվում է բավարար։Աշակերտները համախմբված են ,համերաշխ ,դասարանում չկան դժվար դաստիարակվող երեխաներ։Կան ուսման մեջ ետ մնացող աշակերտներ,որոնց հետ տարվում են անհատական աշխատանքներ։Ընդհանուր առմամբ բոլոր աշակերտները թե տարիքային և թե հոգեբանական առանձնահատկություններով համապատասխանում են չորրոդ դասարանցու մակարդակին։Աշակերտները դպրոց հաճախում են հաճույքով, կարգապահ են, դասերին ակտիվ են մասնակցում։

2. Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում Ուսումնա-դաստիարակչական աշխատանքներում անհրաժեշտ է ընդգրկել հետևյալ խնդիրները՝ հիմնականում ուշադրություն դարձնել աշակերտական կոլեկտիվի կազմակերպման ու համախմբման վրա , դաստիարակել ինքնուրույն, համակողմանի զարգացած անձնավորություններ,որոնք ունեն իրենց սեփական կարծիքը,կողմնորոշումը, ուսումնական աշխատանքում փոխօգնության կազմակերպում,պարզաբանել աշակերտների իրավունքներն ու պարտականությունները՝ մեծ ուշադրություն դարձնելով կարգապահությանը, սերմանել գեղեցիկի գիտակցական ընկալումը, զարգացնել գեղագիտական ճաշակը,բարձրացնել աշխատանքի կարևորությունը,օգտակարությունն ու նշանակությունը։

Ուսումնադաստիարակչական գործընթացը կազմակերպելիս պետք է համագործակցել դասավանդող ուսուցիչների, հոգեբանի, ծնողների հետ՝ հաշվի առնելով յուրաքանչյուր երեխայի անհատական, տարիքային առանձնահատկություններն ու նախասիրությունները։

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 Հոգևոր դաստիարակություն Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ: Սովորեցնել հոգևոր երգեր, աղոթքներ։

3.2 Գեղագիտական դաստիարակություն Աշակերտների մեջ ձևավորել սեր ու հարգանք գեղեցկության նկատմամբ։Սովորեցնել գնահատել իր շրջապատը և իրեն շրջապատող միջավայրը։ Ծանոթացնել արվեստի տեսակներին , հայտնի արվեստագետների կյանքին ու ստեղծագործություններին։ Բացատրել ու

աշակերտների գիտակցությանը հասցնել գեղեցիկի դերն ու նշանակությունը մարդու կյանքում։

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Ծանոթացնել հայ ազգային հերոսների կյանքի պատմությանը,նրանց սխրագործություններին։Աշակերտներին սովորեցնել ռազմահայրենասիրական երգեր,դաստիարակել հայրենիքի պաշտպանության պատրաստակամություն։Կազմակերպել զրույցներ, քննարկումներ պատերազմի մասին։Զևավորել սեր ու հարգանք հայրենիքի նկատմամբ։

3.4 Ֆիզիկական դաստիարակություն Դասապրոցեսին սեր և հետաքրքրություն առաջացնել ֆիզկուլտուրայի և սպորտի նկատմամբ։Զարգացնել կենսականորեն անհրաժեշտ շարժողական հմտություններ,ունակություններ,տարբեր մարզական միջոցառումներ իրականացնել, որոնք կնպաստեն աշակերտների ֆիզիկական զարգացմանը և օրգանիզմի կոփմանը։

3.5 Աշխատանքային դաստիարակություն Աշակերտների մեջ ներարկել սեր, հետաքրքրություն ու հարգանք աշխատանքի ,աշխատավոր մարդու հանդեպ։Բացատրել աշխատանքի կարևորությունը, անհրաժեշտությունն ու օգտակարությունը։Ուսուցանելով տարբեր առարկաներ ու գիտելիքներ,դրանց հիմքում դնել աշխատասիրության ու հաստատուն բնավորության ձևավորման հարցը։

3.6 Բնապահպանական դաստիարակություն Բնության նկատմաբ հոգատար վերաբերմունք, կենդանի ամեն բանի նկատմամբ հարգանք ու հոգատարություն դաստիարակելը կօգնի թե դպրոցին, թե ծնողներին երեխաների մեջ սերմանելու բարություն, մարդասիրություն։Կազմակերպել էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը, անդրադառնալ բնապահպանական որոշ խնդիրների։Սեր արթնացնել բնության նկատմամբ։

4. Դպրոց-ընտանիք կապը Սերտ կապ պահպանել ընտանիքի հետ,դրական վերաբերմունք ձևավորելդպրոցի նկատմամբ։ Հաճախակի կազմակերպել ծնողական ժողովներ,միջոցառումներ,ուսումնադաստիարակչական գործընթացներում մեծացնել ծնողների մասնակցությունը։Դպրոց-ընտանիք կապը պետք է հիմնվի փոխադարձ վստահության վրա։Ծնողներին քաջատեղյակ պահել իրենց երեխաների դրական և բացասական կողմերին։

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	կատարման ժամկետը	Կատարողներ
I	Գիտելիքի օր	7 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
II	Դասասենյակի կանաչ անկյան ստեղծում,<<Դասացուցակի>> և <<Հերթապահության>> կազմում	14 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
III	Տոնդ շնորհավոր ,անկախ Հայաստան	21 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
IV	Հայրենիքը սկսվում է իմ տնից	28 սեպտեմբեր	աշակերտ դասղեկ
V	Շնորհավոր տոնդ, ուսուցիչ	5 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VI	<<Ընկեր,ընկերասիրություն>>-զրույց ,,Կապույտ տերևներ,, և ,,Վատ ընկերը,, կարդալ և քննարկել	12 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VII	<<Գունավոր երեխաներ>>:Ինչ է ասում իմ սիրած գույնն իմ մասին	19 հոկտեմբեր	աշակերտ դասղեկ
VIII	,,Ոսկեհեր աշուն,,դաս-միջոցառում	2 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
IX	Էքսկուրսիա դեպի մոտակա աշնանային այգի	9 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
X	Երթևեկության կանոնների հիշեցում	16 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XI	<< Աշակերտների իրավունքները և պարտականությունները դպրոցում>>	23	աշակերտ դասղեկ

		նոյեմբեր	
XII	Համակարգիչն ընկե՞ր է, թե՞ թշնամի	30 նոյեմբեր	աշակերտ դասղեկ
XIII	Ինչպե՞ս վարվել վտանգավոր իրավիճակներում	7 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XIV	Ձմեռ պապի արհեստանոց:Ստեղծել ամանորյա տրամադրության անկյուն	14 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XV	Նախապատրաստվել <<Ուրախ Ամանոր>>միջոցառմանը	21 դեկտեմբեր	աշակերտ դասղեկ
XVI	Հանդուրժողականություն-զրույց	11 հունվար	աշակերտ դասղեկ
XVII	Լինենք բարեկիրթ	18 հունվար	աշակերտ դասղեկ
XVIII	Զրույց << Հզոր բանակ>> թեմայով:Ուսուցանել հայրենասիրական երգեր:	25 հունվար	աշակերտ դասղեկ
XIX	Մեր ազգային հերոսները	1 փետրվար	աշակերտ դասղեկ
XX	,,Պահպանենք բնությունը , պահպանենք կյանքը,,- զրույց	8 փետրվար	աշակերտ դասղեկ
XXI	Գիրքը իմ բարեկամն է	15 փետրվար	աշակերտ դասղեկ
XXII	<< Մայրենի լեզու՝ մայրենի բարբառ>>:Լույս ընծայել պատի թերթ	22 փետրվար	աշակերտ դասղեկ
XXIII	Գարու՛ն է, սիրու՛ն է	1 մարտ	աշակերտ դասղեկ

XXIV	Գարուն, արև, մայրիկ։Նախապատրաստվել միջոցառման	8 մարտ	աշակերտ դասղեկ
XXV	Գիտելիքը ուժ է	15 մարտ	աշակերտ դասղեկ
XXVI	Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները	22 մարտ	աշակերտ դասղեկ
XXVII	Սուրբ Զատիկ	5 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXVIII	Եթե ես կարողանայի...	12 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXIX	<< Հայոց Մեծ եղեռն >> -զրույց	19 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXX	Երկրագունդը բոլորիս տունն է	26 ապրիլ	աշակերտ դասղեկ
XXXI	Հաղթանակների ամիս՝ մայիս	3 մայիս	աշակերտ դասղեկ
XXXII	Մեր հերոս նախնիները	10 մայիս	աշակերտ դասղեկ
XXXIII	Բուժենք << հիվանդ >>գրքերը	17 մայիս	աշակերտ դասղեկ
XXXIV	Էքսկուրսիա	24 մայիս	աշակերտ դասղեկ

ԾՆՈՂԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐ

Անցկացման Օրը	Քննարկվող հարցեր	Ծանոթություն
	1.2022-23 ուս.տարվա ուսումնադաստիարակչական աշխատանքները 2.Ծնողկոմիտեի ստեղծում	